ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» սեպտեմբերի 2012թ. **N-----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 182-Ն ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 472-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերին համապատասխան.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի <<Երևանի ենթակայության կազմակերպությունները Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու և լիազորություններ պատվիրակելու մասին>> N 182-Ն և 2012 թվականի հունիսի 26-ի <<Երևանի ենթակայության կազմակերպությունները Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու և լիազորություններ պատվիրակելու մասին>> N 472-Ն որոշումների մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) որոշումների 2-րդ կետը <<լիազորությունները>> բառից հետո լրացնել <<, բացառությամբ սույն որոշման 3-րդ կետով սահմանված դեպքի,>> բառերով, իսկ <<ղեկավարներին>> բառից հետո լրացնել <<, ընդ որում՝ մինչև սահմանված կարգով մրցույթի արդյունքում կազմակերպության գործադիր մարմնի ընտրությունը (նշանակումը) կազմակերպության գործադիր մարմնի ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը վերջիններս նախապես համաձայնեցնում են Երևանի քաղաքապետի հետ>> բառերով,

2) որոշումները լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

<<3. Երևանի ենթակայության կազմակերպության գործունեության վերահսկողության արդյունքում իրավական ակտերի պահանջների այնպիսի խախտումներ հայտնաբերելու դեպքում, որոնք՝ համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, հիմք են հանդիսանում կազմակերպության գործադիր մարմնի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համար, կազմակերպության գործադիր մարմինը պաշտոնից ազատվում է Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա:>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

<<ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 182-Ն ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 472-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 08.02.2011թ. N182-Ն և 26.06.2012թ. N472-Ն որոշումներով /այսուհետ՝ որոշումներ/ Երևանի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանն են հանձնվել մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ և վերջիններիս են պատվիրակվել «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով նախատեսված Երևանի քաղաքապետի լիազորությունները, այդ թվում՝ քաղաքային կազմակերպությունների ղեկավարներին պաշտոնի նշանակելու լիազորությունը:

Երևանի քաղաքապետի 22.03.2011թ. N 899-Ն որոշմամբ հաստատվել են Երևան քաղաքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ Երևան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի և ատեստավորման ընթացակարգերը:

Երևանի քաղաքապետի 22.03.2011թ. N899-Ն որոշման N1 հավելվածի 88-րդ կետի համաձայն՝ նշված ընթացակարգով սահմանված Երևանի քաղաքապետի լիազորություններն իրականացնում է վարչական շրջանի ղեկավարը, եթե Երևան քաղաքի ավագանու որոշմամբ վերջինիս պատվիրակվել է գործադիր մարմնի նշանակման քաղաքապետի լիազորությունը:

Այսինքն, վարչական շրջանների ղեկավարներին, ըստ էության, պատվիրակվել է կազմակերպության գործադիր մարմնի թափուր պաշտոն առաջանալու դեպքում հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված անձին նշված պաշտոնին նշանակելու լիազորությունը:

Օրենքով սահմանված հիմքերով կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնը թափուր մնալու դեպքում՝ մինչև Երևանի քաղաքապետի 22.03.2011թ. N 899-Ն որոշման հիման վրա հայտարարված մրցույթում հաղթողի հետ պայմանագիր կնքելը և պաշտոնին նշանակելը, առաջանում է կազմակերպության գործադիր մարմնի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու խնդիր:

Նախագծով առաջարկվում է որոշումների 2-րդ կետը <<ղեկավարներին>> բառից հետո լրացնել <<, ընդ որում՝ մինչև սահմանված կարգով մրցույթի արդյունքում կազմակերպության գործադիր մարմնի ընտրությունը (նշանակումը) կազմակերպության գործադիր մարմնի ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը վերջիններս նախապես համաձայնեցնում են Երևանի քաղաքապետի հետ>> բառերով:

Որոշումներով Երևանի վարչական շրջանների ղեկավարներին պատվիրակվել է նաև քաղաքային կազմակերպությունների ղեկավարներին պաշտոնից ազատելու լիազորությունը, սակայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետով նախատեսված Երևանի քաղաքապետի՝ պետական կազմակերպության գործունեության վերահսկողություն իրականացնելու լիազորությունը վերջիններիս չի պատվիրակվել:

Նախագծով առաջարկվում է որոշումների 2-րդ կետը լրացնել <<լիազորությունները>> բառից հետո լրացնել <<, բացառությամբ սույն որոշման 3-րդ կետով սահմանված դեպքի,>> բառերով և որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով. <<3. Երևանի ենթակայության կազմակերպության գործունեության վերահսկողության արդյունքում իրավական ակտերի պահանջների այնպիսի խախտումներ հայտնաբերելու դեպքում, որոնք՝ համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, հիմք են հանդիսանում կազմակերպության գործադիր մարմնի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համար, կազմակերպության գործադիր մարմինը պաշտոնից ազատվում է Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա:>>:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 182-Ն ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 472-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի N 182-Ն և 2012 թվականի հունիսի 26-ի N 472-Ն որոշումների մեջ լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 182-Ն ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 472-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի N 182-Ն և 2012 թվականի հունիսի 26-ի N 472-Ն որոշումների մեջ լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ